Հավելված N1
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի մարտի 9-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/15

«Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար «շարժիչի , նավթային և էլեկտրամեկուսիչ յուղերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի մարտի 5--ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2020 թվականի մարտի 9-ի տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1 քանի որ 1-ին չափաբաժնով նախատեսվող շարժիչի յուղերի տեխնիկական բնութագրերում նշված առանձին ցուցանիշները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրում նշված API SG/CD միջազգային ստանդարտի պահանջներին, խնդրում ենք պարզաբանել անհրաժեշտ է API SG/CD միջազգային ստանդարտին համապատասխծանող շարժիչի յու՞ղ, թե առանձին ցուցանիշներին համապատասխանող յուղ

Պարզաբանում N 1 1-ին չափաբաժնի յուղերի API միջազգային ստանդարտը կանոնակարգում է շարժիչային յուղերն ըստ կիրառման ոլորտների:

Հարցադրում N 2 քանի որ 2-րդ չափաբաժնով նախատեսվող շարժիչի յուղերի տեխնիկական բնութագրերում նշված առանձին ցուցանիշները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրում նշված API SG/CD միջազգային ստանդարտի պահանջներին, խնդրում ենք պարզաբանել անհրաժեշտ է API SG/CD միջազգային ստանդարտին համապատասխծանող շարժիչի յու՞ղ, թե առանձին ցուցանիշներին համապատասխանող յուղ:

Պարզաբանում N 2 2-րդ չափաբաժնի յուղերի API միջազգային ստանդարտը կանոնակարգում է շարժիչային յուղերն ըստ կիրառման ոլորտների:

Հարցադրում N 3 2-րդ չափաբաժնով նախատեսվող շարժիչի յուղերը կարո՞ղ են համապատասխանել API SF/CC կամ API SG/CD ստանդարտներին

Պարզաբանում N 3 Մեզ անհրաժեշտ են 1989-93 թ.թ. թողարկված բենզինային շարժիչների (ոչ SF) և 1955 թ. հետո թողարկված դիզելային շարժիչների (ոչ CC) համար համապատասխանաբար 10W40 և 15W40 մածուցիկությամբ շարժիչային յուղեր՝ հրավերում ներկայացված տեխնիկական բնութագրերով:

Հարցադրում N 4 4-րդ չափաբաժնով նախատեսվող յուղը ընդունելի՞ է նույն տեխնիկական բնութագրերով սակայն այլ մակնիշի տրանսմիսիոն յուղ

Պարզաբանում N 4 4-րդ չափաբաժնով պահանջվում է հրավերում ներկայացված տեխնիկական բնութագրերով տրանսմիսիոն յուղ Նիգրոլ (ամառային տարբերակ):

Հարցադրում N 5 5-րդ չափաբաժնով նախատեսվող յուղը կարո՞ղ է համապատասխանել CTO 77820966-060-2017 ստանդարտին:

Պարզաբանում N 5 5-րդ չափաբաժում հիշատակվող ԳԿ տրանսֆորմատորային յուղն արտադրվում է ТУ 38.101.1025-85 համապատասխան: Եթե CTO 77820966-060-2017 –ին համապատասխան տեխնիկական բնութագրերը չեն տարբերվում հիշատակված ТУ-ի տվյալներից, ապա կարելի է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Նարինե Նիկոլայանին:

Հեռախոս՝ 012 74 00 77:

Էլեկոտրանային փոստ՝ «sevan_hr.gnum@mail.ru»::

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով